

**ՀԱՅՈՑ ՍՄԲԱՏ Բ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ԳԱԳԻԿ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բանայի բառեր - Սմբատ Բ, Գագիկ, Բագրատունիներ, տիրույթ, բաժանում, գահաժառանգ, դավադրություն, Գեղամա երկիր, Տաշիրքի թագավորություն

Աշոտ Գ Ողորմած թագավորի որդիների՝ Սմբատի և Գագիկի փոխհարաբերությունների խնդիրը

Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-978) երկու ավագ որդիների՝ Սմբատի և Գագիկի փոխհարաբերությունների քննությունը հույժ կարևորվում է սկզբնաղբյուրներում առկա սակավ տեղեկությունների և դրանց հիման վրա գիտական գրականության մեջ շրջանառվող քրեական ենթատեքստի լուսաբանման և առնչակից իրողությունների բացահայտման տեսանկյունից: Կենտրոնանալով հիմնականում Սմբատ Բ Տիեզերակալ թագավորի (978-990) մահվան հանգամանքների վրա և հետևաբար ջանալով արքայի կարծեցյալ սպանությունը կապել նրա եղբայր Գագիկի հետ և ներկայացնել դրա դրդապատճառները՝ հետազոտողները բավարար չափով չեն բացահայտել նրանց փոխհարաբերությունները, դրանց առանձնահատկությունները, Գագիկի դիրքը Անիի արքունիքում Սմբատ Բ-ի գահակալության օրոք և այլ կարևոր իրողություններ: Դրանք հնարավորություն կտային լույս սփռել Բագրատունյաց արքունիքում գոյություն ունեցող սովորույթների վրա՝ հնարավորինս բացահայտելով նաև Սմբատ Բ-ի մահվան հանգամանքները:

Աշոտ Գ-ի տիրությունների բաժանումը երեք որդիների միջև և Գագիկի «բաժինը»

Ըստ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների՝ Աշոտ Գ Ողորմածի մահից հետո (978 թ. հունվարի 3)¹ նրա երեք որդիները՝ Սմբատը, Գագիկն ու Գուրգենը, երեք մասի են բաժանել տոհմական տիրույթները՝ ստանալով իրենց բաժինները: Ըստ «Թագաւորք վերջինք Բագրատունիք» ժամանակագրության՝ Աշոտ Գ-ի որդիները «համակամ սիրով երիս բաժանեն զթագաւորութիւնն՝ հայրագլուխ առնելով զՍմբատ»², ինչը նշանակում է, որ

¹ Տե՛ս Եղիազարյան Ա., Աշոտ Գ Ողորմած. թագավոր հայոց, Երևան, 2020, էջ 120:

² «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 501: Տե՛ս նաև «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քեթուկը)», աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 59:

Բագրատունիների տիրությունները բաժանվել են երեք եղբայրների միջև, իսկ նրանցից ավագը՝ գահը ժառանգած Սմբատը, դարձել է հայրագլուխ, այն է՝ ավագ կամ գերակա¹: Այդ բաժանումից հետո՝ ամենայն հավանականությամբ 978 թ., Սմբատ Բ-ն մեկնել է Տաշիրք², իսկ նրա այցելության ժամանակ Գուրգենը հռչակվել է Տաշրաց թագավոր³:

Տաշիրքի թագավորության ընդգրկած տարածքների մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում Սանահինի վանքին Սմբատ Բ-ի անունից տրված՝ հայոց 428 թ. (մարտ, 979 թ. - մարտ, 980 թ.) հրովարտակր: Դրանով Սմբատ Բ Տիեզերակալը հանձնում էր «վիճակ եւ երկիրս զայս Սանահինս զամենայն երկիրն Տաշրաց՝ զՎերին եւ զՆերքին, մինչ ի լեռնն Բագում, յայսկոյս եւ յա[յ]նկոյս, մինչեւ ի սահմանս Գուգարաց աշխարհին եւ մինչ ի սահմանս Տփիս[ե]աց եւ Վրաց, եւ ի սահմանս Նիզ գաւառի եւ մինչեւ ի սահմանս Կայենոյ, եւ զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս Տան Շիրակայ»⁴: Այդ եկեղեցական «վիճակում» ընդգրկված տարածքը, այն է՝ «Տաշրաց երկիրը», որ նույնական էր Տաշիրքի կամ Տաշրաց թագավորության սահմաններին⁵, ներկայացված է շատ հստակ և որոշակի: Այն ընդգրկում էր Այրարատի հյուսիսարևելյան հատվածը (Նիզ գավառի հյուսիսային հատվածը՝ «հայսկոյս Բագումը» և, ամենայն հավանականությամբ, նաև Վարաժնունիք գավառի հյուսիսային մասը՝ մինչև Ծաղկոցաց-Ծաղկունյաց լեռները) և Գուգարքի ամբողջ արևելյան հատվածը՝ Կանգարքից մինչև Շամշուղե ամրոցը հյուսիսում, և Կայան բերդը՝ Աղստև գետի հովտում տարածվող համանուն գավառակով՝ արևելքում⁶: Հրովարտակի սույն տեղեկությունն ընդհանուր առմամբ համահունչ է այլ սկզբնաղբյուրների վկայություններին⁷:

Թեև ըստ վերոհիշյալ ժամանակագրության տվյալների՝ երեք եղբայրնե-

¹ «Հայրագլուխ» նշանակում է «իբրև հայր խնամակալող, խնամակալ»: Տե՛ս Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հ. առաջին, Ա-Ե, Երևան, 1944, էջ 40:

² Տե՛ս «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քեթուկը)», էջ 56, **Եղիազարյան Ա.**, Սմբատ Բ Տիեզերակալ. թագավոր հայոց, Երևան, 2021, էջ 45-46:

³ Տե՛ս «Մխիթարայ Այրիանեցոյ պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 56, «Մխիթարայ Այրիանեցոյ պատմութիւն ժամանակագրական», Ս. Պետերբուրգ, 1867, էջ 71: Տե՛ս նաև **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 851, **Սովսեան Դ.**, Լոռիի Կիրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, էջ 26-28, **Մաթևոսյան Ռ.**, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1968, թիվ 3, էջ 200-202, *նույնի*՝ Լոռվա թագավորության կազմավորման պատմությունից // «ԼՀԳ», 1976, թիվ 3, էջ 86-95 և այլն:

⁴ «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քեթուկը)», էջ 67:

⁵ Տե՛ս **Շահնագարյան Ա.**, Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը // «ՊԲՀ», 2009, թիվ 2-3, էջ 225-226:

⁶ Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Կայան բերդի և գավառի տեղադրությունը // «ԼՀԳ», 1972, թիվ 2, էջ 53-62:

⁷ Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 90, «Սանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501:

րից յուրաքանչյուրը բաժին էր ստացել տոհմական տիրույթներից, այդուհանդերձ անհայտ է Գագիկի պարագան: Ավելին, եթե Գուրգենը, ստանալով իր տիրույթները, թագավոր էր հռչակվել, ապա ինչո՞ւ նույնը չէր կատարվել Գագիկի հետ: Հայտնի է, որ նա այդպես էլ տեղական թագավոր չի հռչակվել իրեն բաժին հասած տիրույթներում, ավելին, ըստ Աստղիկի՝ դեպքերի, իսկ որ ավելի հավանական է՝ պաշտոնի կամ կարգավիճակի բերումով, գտնվել է Սմբատ Բ-ի արքունիքում և մասնակցել նրա կարևոր ձեռնարկներին, օրինակ՝ 988 թ. ռազմերթին դեպի հյուսիս¹:

Արդ, հույժ կարևորվում է Գագիկի ստացած տիրույթի ճշգրտումը: Պատմագրության մեջ այդ խնդրին գրեթե անդրադարձ չի եղել: Որքան մեզ հայտնի է, միայն Մ. Օրմանյանն ու Մ. Սմբատյանցն են այդ մասին որոշակի տեսակետ հայտնել: Մ. Օրմանյանը կարծում է, թե Գագիկի տիրույթը գտնվել է Գուգարքի կողմերում², իսկ Մ. Սմբատյանցը գտնում է, որ նա ժառանգել է Գեղարքունիքը³: Գագիկի տիրույթին է, անկասկած, վերաբերում Աստղիկի հետևյալ տեղեկությունը: Անդրադառնալով 992 թ. կաթողիկոս դարձած Սարգիս Ա Սևանցուն՝ նա տեղեկացնում է, որ «Գագիկ յաւուրս մանկութեան իւրոյ, յորժամ շրջէր նա ի գաւառին Գեղամայ, տայ նմա (տէր Սարգսին – Ա. Ե.) տեղի եւ վանս բնակութեան, զվանսն, որ յաղագս ծագման իրիք լուսոյ աստուածայնոյ Շողագայ անուանի»⁴: Պարզվում է, որ երիտասարդ տարիներին Գագիկ Բագրատունին «շրջել» է Գեղամա երկրում (գավառում)՝ ապագա կաթողիկոս Սարգսին այնտեղ բնակության և ծառայության համար հատկացնելով Շողագա վանքը, որը գտնվում է Գեղամա ծովից դեպի հարավ-արևմուտք՝ Չորագյուղի հարևանությամբ: Ըստ Մ. Օրմանյանի՝ Շողագա վանքը Գագիկը հանձնել էր Սարգսին, երբ «տակաւին յաւուրս մանկութեան իւրոյ էր, որ է ըսել արքայագուն իշխանի դիրքի մէջ էր»⁵: Մ. Չամչանցը ևս կարծում է, որ Գագիկը այդ արել էր նախքան թագավորելը⁶:

Հարկ է նշել, որ Գեղամա գավառը կամ երկիրը, որն ընդգրկում էր Սյունիք աշխարհի հյուսիսային Գեղարքունիք և Սոթք գավառները, դուրս էր մնացել Սյունյաց թագավորության (հիմնադրումը՝ 983 թ.) կազմից: Այդ իրողությանն անդրադարձել են մի շարք գիտնականներ, որոնցից Հ. Ութմազյանը կարծում է, որ այդ գավառների միացումը Բագրատունյաց տիրույթ-

¹ Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի Աստղիկ**, Պատմություն տիեզերական // «Մատենագիրք հայոց», հ. ԺԵ, Ժ. դար, Պատմագրություն, գիրք Բ., Երևան, 2011, էջ 806:

² **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, § 788, պտն 1141:

³ Տե՛ս «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի որ այժմ Նոր-Բայագիտ գաւառ», գրեց Մեսրոպ արք-եպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, Վաղարշապատ, 1895, էջ 31:

⁴ **Աստղիկ**, էջ 810-811:

⁵ **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 799, պտն 1157:

⁶ Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 877:

ներին տեղի է ունեցել Աշոտ Երկաթի օրոք, երբ տեղի Վասակ իշխանը մեղադրվեց հակառակաթոռ թագավոր Աշոտ Շապուռիանի (916-934) հետ գործակցելու մեջ¹: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Աշոտ Երկաթը Վասակին կալանավորել է և նվաճել «ընդ իրով ձեռամբ գտերութիւն նորա (իմա՝ Վասակի – Ա. Ե.)»²: Ամենայն հավանականությամբ, այդ իրադարձությունը տեղի է ունեցել 919 թ.³: Հ. Ութմազյանը կարծում է, որ այդպիսով Գեղարքունիքը միացվել էր Բագրատունյաց տիրույթներին, ու թեև Գարդմանի իշխան Մահակ Սևադան Վասակին ազատել էր կալանքից և ուղարկել իր հայրենի երկիրը («հանեալ արձակեալ զնա ի տուն հաւր իւրոյ») ⁴, նա հաջողություն չի ունեցել, և Գեղարքունիքը այդուհետև կազմել է Բագրատունիների արքունի տիրույթների մասը⁵:

Գիտական գրականության մեջ Ստեփանոս Օրբելյանի՝ Բագրատունյաց թագավորության մասնատման և նրա կազմում նոր թագավորությունների շրջանի վերաբերյալ «զի այնմ ժամանակի Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրական սահմանն և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման. և Միւնիք կտրեալ էր ի նոցանէ»⁶ հիշատակության «մինչ ի Գեղամ» հատվածը մակաբերվել է «մինչև Գեղամա լեռներ»⁷ ձևով: Ուստի փորձ է կատարվել ինչ-որ կերպ բացատրել տեղեկությունը, որը նման մեկնաբանության դեպքում հակասում է պատմական իրողությանը և նշանակում, որ մասնավորապես Գեղամա լեռներից արևելք գտնվող Գեղարքունիք գավառը դուրս էր Բագրատունիների տիրույթներից և կազմում էր Սյունիքի թագավորության մասը, ինչն այդպես չէր⁸: Իրականում, ամենայն հավանականությամբ, հեղինակը նկատի ունի Գեղամա ծովը, որի ափամերձ գավառները պատկանում էին Բագրատունիներին: Նման ստուգաբանությունը լուծում է խնդիրը և պատմիչի տեղեկությունը դարձնում հավաստի:

Թ. Հակոբյանը ևս համոզված է, որ Գեղարքունիքն ու Սոթքը դուրս են մնացել Սյունիքի թագավորության կազմից⁹: Նա այդ գավառներն ընդգրկող

¹ Տե՛ս **Ութմազյան Հ.**, Սյունիքը IX-X դարերում, Երևան, 1958, էջ 117-119:

² «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց» // «Մատենագիրք հայոց», հ. ԺԱ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 545:

³ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Երկաթ. թագավոր Հայոց, Երևան, 2016, էջ 64-65:

⁴ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 548:

⁵ Տե՛ս **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 119:

⁶ «Պատմութիւն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 300:

⁷ **Հակոբյան Թ.**, Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Երևան, 1966, էջ 60, **Հարությունյան Բ.**, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը // «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 1969, թիվ 1, էջ 151-152 և այլն:

⁸ Տե՛ս **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 60:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 60-61:

Գեղամա երկրում Գագիկ Բագրատունու կողմից տիրությունը նվիրելը բացատրում է այն իրողությամբ, որ այդ երկիրը պատկանում էր Բագրատունիներին, «այլապես Գագիկը չէր կարող այդ երկրից որևէ տեղ նվիրել այս կամ այն անձնավորությանը»¹: Հեղինակը սակայն չի խորացնում իր դիպուկ դիտարկումը և չի բացատրում հենց «մանուկ» Գագիկի ներկայությունը Գեղամա երկրում: Իսկ վերջինս իրականում գտնվում էր այնտեղ և նվիրաբերություններ կատարում, քանի որ տոհմական տիրությունների բաժանման ժամանակ հենց այդ տարածաշրջանն էր ստացել: Այդ առումով տպավորիչ է Մ. Սմբատյանցի դիտարկումը. «Գագիկ Ա. Բագրատունի ... ժառանգեալ զԳեղարքունիին՝ զՇողագայի վանս ետ ի պարզև վանահորն Սևանայ Սարգիս վարդապետի»²: Փաստորեն, հեղինակը կռահել է, որ Գագիկին բաժին է հասել (ժառանգել է) Գեղամա երկիրը, մասնավորապես Գեղարքունիք գավառը:

Ինչպես նշվեց, հետագայում Գագիկը գտնվում էր Սմբատ Բ-ի արքունիքում, սակայն մի պահ վստահաբար բնակվել է իր տիրույթ Գեղամա երկրում: Դա հիմնավորվում է Մտեփանոս Օրբելյանի հիշատակությամբ: Անդրադառնալով Գեղամա ծովից հարավ՝ դարձյալ Գեղամա երկրում գտնվող Վանեվանքի շիրիմներին՝ նա այնուհետև գրում է. «Նորոգե Գագիկ՝ որդի Աշոտոյ շահանշահի, զիրաշակերտ եկեղեցին Վանեվանսց՝ զուրբ կաթողիկէն, և տայ զԴեղձանագետ ի նա. և պարսպէ շուրջ եկեղեցեան և զրէ արձան անիծից ոչ յափշտակել զայն ի սուրբ եկեղեցւոյն»³: Հետաքրքիր է, որ ի տարբերություն այլ դեպքերի, երբ Գագիկին հիշելիս հեղինակը գրում է՝ «թագաւորն Գագիկ»⁴ կամ «ի թագավորութեանն Գագկայ»⁵, այստեղ միայն գրված է՝ «Գագիկ՝ որդի Աշոտոյ շահանշահի»: Թերևս կարելի է ենթադրել, որ խոսքն այն ժամանակաշրջանի մասին է, երբ Գագիկը իր եղբայր Սմբատ Բ թագավորի օրոք՝ տոհմական ժառանգությունը բաժանելուց հետո, գտնվում էր իր սեփական տիրույթներում՝ Գեղամա երկրում: Այդ առումով կարևոր է, որ 978 թ., երբ Սմբատ Բ-ն մեկնեց Տաշիրք՝ Գուրգենին այցելության և նրան հռչակեց Տաշրաց թագավոր, Գագիկը նրա հետ չէր⁶, քանի որ, ամենայն հավանականությամբ, գտնվում էր Գեղամա երկրում: Ղ. Ալիշանը կարծում է, որ Գագիկը նշված վերանորոգումն իրականացրել է նախքան թագավորելը⁷, ինչը առավել քան հավանական է: Ամենայն հավանականությամբ, Գագիկը Գեղամա երկրում կարճ ժամանակով հաստատվել և գործունեություն է իրականացրել կամ 978 թ. և կամ 980-ական թվականների սկզբին, երբ, ինչպես կտեսնենք,

¹ **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 61:

² «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի», էջ 31:

³ **Մտեփանոս Օրբելյան**, էջ 182-183:

⁴ Նույն տեղում, էջ 303:

⁵ Նույն տեղում, էջ 262:

⁶ «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քեթուկը)», էջ 56-57:

⁷ Տե՛ս **Ալիշան Ղ.**, Միսական. տեղագրութիւն Միւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 61:

982 թ. դավաճանության մեջ կասկածվելով՝ հեռացվել էր արքունիքից: Առավել հավանական է երկրորդ հնարավոր տարբերակը, քանի որ 978 թ. Գագիկը միայն կարճ ժամանակով է գտնվել Գեղամա երկրում, որից հետո վերադարձել է Անի և մինչև 982 թ. գտնվել այնտեղ:

Այն, որ Գեղամա երկիրն իրոք եղել է Գագիկի տիրույթը, անուղղակիորեն հիմնավորվում է այն իրողությամբ, որ Գագիկ Բագրատունու կինը՝ Կատրանիդեն, Սյունյաց Վասակ թագավորի դուստրն էր¹: Ակնհայտ է, որ լինելով Գեղամա երկրի տիրակալը՝ Գագիկը սերտ հարաբերություններ էր հաստատելու Սյունյաց տերերի հետ:

Փաստորեն, «Գագիկ յաւուրս մանկութեան իւրոյ, յորժամ շրջէր նա ի գաւառին Գեղամայ» տեղեկության մեջ «շրջէր»-ը որպէս «այցելել»², «ճամփորդել»³ կամ «շրջագայել»⁴ ստուգաբանելը կարիք ունի հավելյալ բացատրության⁵, քանի որ Գեղամա երկրում վանք ու բնակատեղի նվիրաբերելու իրողությունը հնարավորություն է տալիս այդտեղ «շրջել»-ը տեղավորել հայրական տիրույթների բաժանման տրամաբանության մեջ և ենթադրել, որ վերջինիս արդյունքում Գագիկին բաժին էր հասել հենց Գեղամա երկիրը կամ գավառը: Սակայն, ի տարբերություն Գուրգենի, որ սեփական բաժինը ստանալուց հետո հաստատվել էր այնտեղ, իսկ հետո թագադրվել, Գագիկը իր տիրույթում «շրջելուց» ու ծանրակշիռ ձեռնարկներ իրականացնելուց հետո այդտեղ չէր հաստատվել, այլ վերադարձել էր արքունիք՝ այնտեղ հայտնվելով դժվարին վիճակում: Այս առումով հույժ կարևոր է պարզաբանել, թե ինչու էր նա վերադարձել արքունիք՝ հրաժարվելով Գուրգենի օրինակով թագավոր հռչակվելու հնարավորությունից, թեև Գուրգենի նախադեպը, որը բխում էր երեք եղբայրների միջև հայրական տիրույթների բաժանման տրամաբանությունից, կարող էր գործել նաև Գագիկի պարագայում: Անկասկած, Սմբատ Բ-ի արքունիք տեղափոխվելը նրա համար ավելի հեռանկարային քայլ էր, քան տեղական թագավոր հռչակվելը:

Գագիկ Բագրատունին Սմբատ Բ-ի արքունիքում

Գագիկի՝ նախքան թագավորելը ծավալած գործունեության մասին շատ քան հայտնի չէ: Սմբատ Բ-ի գահակալության շրջանում Գագիկի գործունեության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդել Վարդան

¹ Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 303:

² Տե՛ս «The Universal History of Stepanos Taroneci», Introduction, Translation, and Commentary Tim Greenwood, Oxford University Press, 2017, p. 295:

³ Տե՛ս «Всеобщая история Степаноса Таронского Асох'ика по прозванию» (писателя XI столетия), переведена с армянского и объяснена Н. Эминым, Москва, 1864, с. 186:

⁴ Տե՛ս **Ստեփանոս Սառղիկ Տարունեցի**, Տիեզերական պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Վարդանյանի, Երևան, 2000, էջ 319:

⁵ «Շրջել»-ը իրոք մակաբերվում է որպէս «շրջագայել, դեզերել, այց առնել» և այլն: Տե՛ս «Նոր Բաղգիրք հայկազեան լեզուի», հ. երկրորդ, Հ-Ֆ, Երևան, 1981, էջ 499:

վարդապետը: Ըստ նրա՝ «Գագիկ սակաւ ինչ կեցեալ ընդ եղբօրն, հալածական լինի վասն կարծեաց ինչ դրժանաց»¹: Այնուհետև նա նշում է. «Մմբատ հասեալ ի չորեքհարիւր քսան և ութ թին (979/980 թ., իրականում՝ 990 թ.)՝ կատարի. և նոյնժամայն կոչեն զհալածեալն Գագիկ, և տան նմա զթագն...»²: Ստացվում է, որ Գագիկը Մմբատ Բ-ի գահ բարձրանալուց հետո մնացել է արքունիքում, սակայն կասկածվել դավաճանության մեջ, հեռացել է և կարողացել վերադառնալ միայն Մմբատ Բ-ի մահից հետո: Ինչպես տեսանք, 988 թ. Գագիկը Մմբատ Բ-ի կողքին էր:

Հետաքրքրական է, որ ուսումնասիրողները Գագիկ Բագրատունու՝ մինչև 990 թ. թագադրվելն իրականացրած գործունեությամբ չեն հետաքրքրվել: Բացառություն է Մ. Չամչյանցը, որը ներկայացնում է Գագիկին առնչվող հետևյալ իրադարձությունները 982 թվականից սկսած: Երբ Մմբատ Բ-ն զբաղված էր Անիի պարսպի շինարարությամբ, նրա եղբայր Գագիկը, այլոց քսությունից հրահրված, դավադրության կազմակերպման փորձ ձեռնարկեց: Մմբատը փորձեց նրան ձերբակալել, սակայն նա փախուստի դիմեց: Շուտով եղբայրները հաշտվեցին³: Տարիներ անց, երբ Մմբատ Բ-ն Գողթնի ամիրայի հետ հաշտություն էր կնքել, Գագիկը կրկին փորձեց դավաճանել եղբորը՝ ծածուկ միաբանվելով Գողթնի ամիրային: Սակայն նա կրկին ստիպված էր փախուստի դիմել, քանի որ Մմբատ Բ-ն տեղեկացել էր այդ մասին: Վասակ Պախլավունի սպարապետի միջնորդությամբ եղբայրները վերջնականապես հաշտվեցին, և Մմբատը Գագիկին իշխանաց իշխան կարգեց⁴: Տեսակետը, թե մինչև թագավորելը Գագիկը եղել է իշխանաց իշխան, Մ. Չամչյանցը ներկայացնում է մեկ այլ տեղում ևս⁵:

Շեշտենք, որ Մ. Չամչյանցի կարծիքը միայն մասամբ է համապատասխանում սկզբնաղբյուրային տեղեկություններին: Մասնավորապես այլոց քսությամբ դավաճանություն ծրագրելու և փախուստի դիմելու պնդումը հիմնված է Վարդան վարդապետի այն հաղորդման վրա, որ Գագիկին կասկածել են դավաճանության մեջ և հեռացրել արքունիքից: «Դրժանք» նշանակում է «դավ», «նենգություն», «վնասակարություն», «խարդախանք», «անիրավություն»⁶, ինչը հուշում է, որ Մ. Չամչյանցի կողմից Գագիկին Մմբատ Բ-ի դեմ դավաճանություն վերագրելը խիստ հավանական է⁷, թեև ակնհայտ է նաև Վարդան վարդապետի տեղեկության մեջ առկա անվստահությունը («վասն կարծեաց ինչ դրժանաց»): Իսկ Գողթնի ամիրայի հետ կապված

¹ Վարդան վարդապետ, էջ 90:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Չամչյանց Մ., նշվ. աշխ., էջ 851:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 869:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 871:

⁶ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. առաջին, Ա-Կ, Երևան, 1979, էջ 643:

⁷ Տե՛ս «դաւաճանութիւն» բառի ստուգաբանությունը նույն տեղում, էջ 606:

դրվագը միայն մասամբ է ճիշտ, քանի որ իրականում Գագիկը միայն կարողացել էր խափանել ամիրայի հետ Սմբատ Բ-ի ունեցած դաշինքի ուխտը դրժելու արքայի նպատակը¹: Ի վերջո, ամիրայի հետ Գագիկի միաբանվելու, ինչպես նաև սպարապետի միջոցով հաշտվելու մասին սկզբնաղբյուրներում ոչ մի տեղեկություն չկա: Որևէ հիշատակություն չկա նաև Գագիկին իշխանաց իշխան կարգելու մասին:

Ըստ Վարդան վարդապետի վերոհիշյալ տեղեկության՝ կարծիք է հայտնվել, թե Գագիկը, Սմբատ Բ-ի գահ բարձրանալուց հետո կարճ ժամանակ մնալով նրա հետ և կասկածվելով դավաճանության մեջ, աքսորվել է արքունիքից և միայն Սմբատ Բ-ի մահից հետո է կարողացել վերադառնալ Անի²: Սակայն փաստերը հավաստում են, որ իրականում Գագիկը աքսորից ավելի վաղ է վերադարձել: Դատելով Վարդան վարդապետի այն տեղեկությունից, որ Գագիկը Սմբատի գահ բարձրանալուց հետո կարճ ժամանակ անց հեռացվել է արքունիքից, կարելի է կարծել, որ դա տեղի է ունեցել 980-ական թթ. սկզբին՝ 982 թ.: Խնդիրն այն է, որ, ամենայն հավանականությամբ, Վարդան վարդապետի տեղեկությունը վերաբերում է Սմբատ Բ-ի մի բարդ ռազմավարական հնարքի տապալմանը, որը, ըստ Ասողիկի, տեղի է ունեցել Գագիկի ջանքերով 982 թ.: 988 թ., երբ Վասպուրական արշավելիս Ատրպատականի տիրակալ Աբու ալ-Հայջա Ռավվադյանը մահացավ, Սմբատ Բ-ն սկսեց դաշնակցել Դվինը տիրած Գողթնի ամիրայի հետ: Ըստ որում, հարկ եղավ դաշինքը երդմամբ հաստատելու համար որպես միջնորդ առաքել Խաչիկ Ա կաթողիկոսին (972-992)³: Խնդիրն այն է, որ, ինչպես ներկայացնում է Ասողիկը, Սմբատ Բ-ն «ստեաց ... երդմանն. զոր հաստատեալ էր նա առ ամիրայն Գողթան, զոր նա ըստ հեթանոսական դենին պահեաց, եւ սա քրիստոսական աւրինաւք ոչ պահեաց. այլ ուխտադրուժ եղեալ՝ տայ զգաւրսն Հայոց աւգնական Սալարին՝ ամիրայացուցանել զնա, որ մերժեալն էր յԱստուծոյ. եթէ ոչ էր խափանեալ ի կասկածանաց նենգոյ եղբար իւրոյ Գագկայ»⁴: Փաստորեն, Սմբատ Բ-ն և Գողթնի ամիրան նախկինում ամենայն հավանականությամբ երդմամբ պայմանավորվել էին ինչ-ինչ հարցերի շուրջ, սակայն Բագրատունի տիրակալը երդմնադրուժ էր եղել և զորք ուղարկել Սալարյան ամիրային՝ օգնելու նրան վերահաստատվելու իր նախկին տիրույթներում: Դատելով Ասողիկի վկայությունից՝ նա իր մտադրությունից ի

¹ Տե՛ս **Ասողիկ**, էջ 807:

² Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 788, սյուն 1142:

³ Տե՛ս **Ասողիկ**, էջ 769: Տրամաբանական է կարծել, որ այդ դաշինքով «հայոց թագավորությունն ապահովագրվում էր մուսուլմանական ամիրայությունների հարձակումներից, Հայաստանում նրանք այլևս չէին շարունակելու կենտրոնախույս ուժերին խրախուսելու իրենց գործելակերպը»: **Ալեքսանյան Վ.**, Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի աթոռակալությունը և հայբյուզանդական եկեղեցական հակամարտությունը 10-րդ դարի վերջին քառորդին // «ՎԷՄ», 2020, թիվ 3, էջ 77:

⁴ **Ասողիկ**, էջ 807:

վերջո հրաժարվել է եղբոր՝ Գագիկի պատճառով: Այդ իրադարձությունը կարելի է վերագրել միայն 982 թ., երբ Աբու ալ-Հայջա Սալարյանը մեծ զորքով հարձակվել էր Գողթնի ամիրայության վրա, բայց պարտություն էր կրել ու կորցրել իր տիրույթները, իսկ այնուհետև՝ նաև իշխանությունը Ատրպատականում¹: Ի վերջո սեփական ծառաների ձեռքով նա սպանվեց²: Անկասկած հենց 982 թվականին է Սմբատ Բ-ն որոշել զորք ուղարկել նրան օգնելու: Ոչ վաղ անցյալի թշնամուն աջակցելու՝ Սմբատ Բ-ի՝ առաջին հայացքից խիստ հակասական քայլի պատճառն ակնհայտ է: Գողթնի ամիրան, որին երդմամբ կապված էր Սմբատ Բ-ն, հաղթելով Սալարյան ամիրային, տիրացել էր նրան պատկանող քաղաքների շարքում նաև Դվինին³, վտանգ ստեղծելով Բագրատունյաց տիրույթների համար: Ուստի իր այդ քայլով Սմբատ Բ-ն փորձում էր բարդ դիվանագիտական հնարք կատարել՝ երկրում թափառող Սալարյան ամիրային օգնելու և ամենայն հավանականությամբ Գողթնի ամիրայությանը հակադրելու ճանապարհով վերջինից բխող վտանգը չեզոքացնելու համար: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Սմբատ Բ-ի այդ քայլի նպատակը Դվինը, Նախճավանը և Գողթնը իրեն ենթարկելն էր⁴: Սակայն Սմբատ Բ-ի մտադրությունը ի կատար չէր ածվել, և Աբու ալ-Հայջա Սալարյանը հեռացել էր Հայաստանից⁵: Բայց Գողթնի ամիրան տեղյակ էր Սմբատ Բ-ի արարքին, և երբ նրանց շահերը համընկել են ընդհանուր հակառակորդի Ռավվադյան ամիրայի դեմ պայքարում, նրա հետ դաշինքը վերահաստատելու համար անհրաժեշտ էր եղել հայոց կաթողիկոսի միջնորդությունը:

Փաստորեն, եթե Գագիկի «դրժանքի» դրվագը տեղի է ունեցել 982 թ., ուրեմն նրա աքսորից վերադարձը պետք է լինի ոչ թե Սմբատ Բ-ի մահից հետո, ինչպես պնդում է Վարդան վարդապետը, այլ նախքան կամ հենց 988 թ., երբ նա իր եղբոր կողքին էր: Պատահական չէ, որ Մ. Չամչյանը Գագիկին Սմբատի դեմ գործած երկու դավաճանություն է վերագրում: Կարելի է եզրակացնել, որ Գագիկը 982 թ. հեռացել կամ հեռացվել է Անիից, հաստատվել Գեղամա երկրում, այնտեղ կարևոր մշակութային ձեռնարկներ իրականացրել, բայց շուտով հաշտվել է Սմբատ Բ-ի հետ ու վերադարձել մայրաքաղաք:

Սկզբնաղբյուրային տեղեկությունները փաստում են, որ 988 թ. Գագիկը Սմբատ Բ-ի կողքին էր՝ Տայքի Դավիթ կուրապաղատին (961-1000) զորքով օգնության մեկնելիս: Այդ ժամանակ արխագաց թագավորը արշավանք

¹ Ստողիկի երկի համապատասխան գլուխը (գիրք Գ, գլուխ 12) կոչվում է «Վասն ... բանալոյ իշխանութեան նորա (ինսպէս Աբու ալ-Հայջա Սալարյանի - Ա. Ե.)»: Տե՛ս **Ստողիկ**, էջ 761:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 179:

⁵ Տե՛ս **Ստողիկ**, էջ 761:

ձեռնարկեց Դավիթ կուրապաղատի դեմ¹, որը հավաքեց իր զորքը և «իրազեկ դարձրեց հայոց բոլոր թագավորներին»²: Ասողիկը տեղեկացնում է, որ «կիրապաղատն Տայոց Դաւիթ եւ թագաւորն Վրաց Բագարատ³ առաքեն առ թագաւորն Հայոց Սմբատ՝ կոչել յաւգնականութիւն իւրեանց: Եւ նորա առեալ զամենայն զաւրս Հայոց եւ զԳագիկ զեղբայր իւր, գնաց առ նոսա ի գաւառն Ջաւախաց. եւ բանակին ի գիւղն, որ կոչի Դիւեկն»⁴: Փաստորեն արխագաց թագավորության բանակի դեմ պատերազմին մասնակցելու համար զորքով Ջավախք է ժամանել Սմբատ Բ-ն Գագիկի հետ:

Գագիկը այնուհետև մնաց Անիում, և երբ Սմբատ Բ-ն վախճանվեց, «ի նոյն արւ թագաւորեաց»⁵: Այն է՝ արքայի վախճանի պահին նա Անիում էր, չնայած Վարդան վարդապետը հայտնում է, թե իբր արքայի մահից հետո նրան շտապ կանչել են ու թագադրել:

Փաստորեն կարող ենք նշել, որ Սմբատ Բ-ի գահ բարձրանալուց հետո Գագիկը, որ ստացել էր իր բաժինը տոհմական տիրույթներից, մնացել է Անիում, սակայն կասկածվել դավաճանության մեջ և հեռացվել արքունիքից: Նա կարճ ժամանակով հաստատվել է Գեղամա երկրում գտնվող իր տիրույթում, իսկ այնուհետև մեզ անհայտ պայմաններում վերադարձել Անի և Սմբատ Բ-ի կողքին եղել մինչև նրա մահը, որից հետո նույն օրը հոչակվել է հայոց թագավոր:

Գագիկը հայոց իշխանաց իշխան

Չույժ կարևոր է ճշտելը, թե ինչ պաշտոն կամ կարգավիճակ ուներ Գագիկը Սմբատ Բ-ի արքունիքում, որը նրան ստիպել էր մնալ Անիում՝ սեփական տիրույթ մեկնելու և տեղական թագավոր հոչակվելու փոխարեն:

Ամենայն հավանականությամբ, ճիշտ է Մ. Չամչանցի այն պնդումը, որ նա եղել է իշխանաց իշխան⁶: Նույն տեսակետը, հենվելով Մ. Չամչանցի կարծիքի վրա, հայտնում է Ղ. Ինճիճյանը⁷: Անհայտ է, թե ինչի վրա է հիմնված հեղինակների դատողությունը, քանի որ սկզբնաղբյուրներում դա հաստատող ուղղակի տեղեկություններ չկան, սակայն, մեր համոզմամբ, այն համապատասխանում է իրականությանը: Միայն անհրաժեշտ է հստակեցնել, որ խոսքը ոչ թե նաև տեղական թագավորություններում գոյություն ունեցող իշխանաց իշխանի պաշտոնի մասին է, այլ հայոց իշխանաց իշխանի, որը

¹ Տե՛ս **Ասողիկ**, էջ 805-806:

² «Քարթլիի մատյան», թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վ. Մարտիրոսյանի և Ն. Մկրտումյանի // «ԼՀԳ», 1989, թիվ 9, էջ 72-73:

³ Իմա՝ վրաց թագավոր Բագրատ Խն (958-994):

⁴ **Ասողիկ**, էջ 806:

⁵ Նույն տեղում, էջ 808:

⁶ Տե՛ս **Չամչանց Մ.**, նշվ. աշխ., էջ 869, 871:

⁷ Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 43:

մեկն էր: Հայտնի է, որ հայոց իշխանաց իշխանի պաշտոնը 887-953 թթ. վարում էին արքայատան այն անդամները (Աշոտ Ա-ի գահակալության շրջանում՝ նրա որդի Սմբատը, վերջինիս գահակալության շրջանում՝ նրա որդի Աշոտ Երկաթը, վերջինիս գահակալության շրջանում՝ նրա եղբայր Աբասը, վերջինիս գահակալության շրջանում՝ նրա որդի Աշոտը), որոնց վիճակված էր ժառանգել գահը¹: Ի դեպ, կա նախադեպ նաև արքայի եղբոր կողմից այդ գործնականում գահաժառանգի պաշտոնը զբաղեցնելու մասին: Խոսքն Աբաս Բագրատունու մասին է, որը Աշոտ Երկաթի օրոք հայոց իշխանաց իշխանն էր² և այդ կարգավիճակը ստացել էր արքայի՝ արու գավակ չունենալու պայմաններում³: Հայոց իշխանաց իշխանների հետագիծը, ինչպես նշվեց նախորդիվ, հստակ է Աշոտ Ա-ից մինչև Աբաս Բագրատունու գահակալության շրջանը (887-953), որից հետո հայոց իշխանաց իշխանները (չփոթել իշխանաց իշխանների հետ) այլևս չեն հիշատակվում: Ուստի հետագա ժամանակաշրջանում գահաժառանգության խնդրի լուծման եղանակները պարզաբանելու նպատակով առաջ է քաշվել գահակցության վարկածը⁴, որը հիմնովին մերժելի է⁵: Եվ ահա, ինչպես դիպուկ կռահել է Մ. Չամչյանը, Սմբատ Բ-ի՝ գահաժառանգ չունենալու պայմաններում հայոց իշխանաց իշխան է դարձել նրա եղբայրը՝ Գագիկը: Այդ է պատճառը, որ նա իր տիրույթ Գեղամա երկրում հաստատվելու փոխարեն մնացել էր արքունիքում՝ հրաժարվելով տեղական թագավոր հռչակվելու հնարավորությունից, քանի որ, փաստորեն, հեռանկարն ավելի մեծ էր:

Ամենայն հավանականությամբ, Գագիկը հայոց իշխանաց իշխան է նշանակվել Սմբատ Բ-ի թագավորության սկզբում, թեև Գեղամա երկիրն արդեն ստացել էր որպես բաժին տոհմական տիրույթներից: Բայց այն, որ նա արքունիքից չէր հեռացել և տեղական թագավոր չէր հռչակվել, հուշում է, որ հայոց իշխանաց իշխանի պաշտոնը վարել է Սմբատ Բ-ի գահակալության սկզբից՝ որպես միջնեկ եղբայր, քանի որ արքան որդի չուներ: Հետագայում՝ 980-ական թվականների սկզբին, նա թեև հեռացվել էր արքունիքից, սակայն հետո վերադարձել էր ու վերստացել գահաժառանգի կարգավիճակ ապահովող իր պաշտոնը: Պատահական չէ, որ Սմբատ Բ-ի վաղաժամ մահից հետո գահը ժառանգողի հարցում կասկածներ չծագեցին, և Գագիկը տեղնուտեղը՝ «ի նոյն արք» հռչակվեց հայոց թագավոր⁶:

¹ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք // «ՎԷՄ», 2014, թիվ 1, էջ 62-75:

² Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 544:

³ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աբաս Բագրատունի. թագավոր հայոց, Երևան, 2017, էջ 7-13:

⁴ Տե՛ս **Սաթևոսյան Ռ.**, Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք // «ԼՀԳ», 1977, թիվ 1, էջ 74-79:

⁵ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Գահաժառանգության խնդիրը Բագրատունյաց Հայաստանում և գահակցության վարկածը // «Էջմիածին», 2015, թիվ ԺԲ, էջ 55-68:

⁶ Տե՛ս **Ասողիկ**, էջ 808:

Գագիկը և Սմբատ Բ-ի մահվան հանգամանքները

Սմբատ Բ-ի մահը համարվում էր «կանխաժաման»¹, որը թե՛ այդ և թե՛ հետագա ժամանակաշրջանում կասկածներ է արթնացրել առ այն, թե նրան դավադրաբար սպանել են: Հարկ է շեշտել սակայն, որ, Աստղիկի հավաստմամբ, Սմբատը հիվանդացել ու մահացել է իր երիտասարդ կնոջ մահը ողբալիս²:

Պատմագրության մեջ կա տեսակետ, ըստ որի՝ Սմբատ Բ-ն Գագիկի կազմակերպած դավադրության զոհն է դարձել³: Այդ ենթադրության համար հիմք է հանդիսացել այն, որ Աստղիկը Գագիկին ներկայացնելիս գրում է, թե «աւա դ միում չարին, որ արգել զբան գովեստի պատմութեան իմոյ»⁴, որից բխեցվել է, թե այդ «միակ չարիքը» հենց Սմբատ Բ-ի սպանությունն էր, թեև դա այդքան էլ միանշանակ չէ:

Այն, որ Սմբատ Բ-ի վաղաժամ մահը կասկածներ էր արթնացրել նաև ժամանակակիցների շրջանում, վկայված է Աստղիկի երկասիրության մեջ: Ըստ նրա՝ Սմբատ Բ-ի մահից հետո Անիից մի կին երագ է տեսնում և պատմում քաղաքացիներին, որ արքան չի մեռել, այլ գերեզման է դրվել դեղերով թմրեցված վիճակում, կենդանի է և նշմարվել է: Լուրն արագորեն տարածվում է քաղաքում, և Գագիկ Ա-ն կասկածները չեզոքացնելու համար ստիպված հրամայում է բացել արքայի գերեզմանը և գորքին ու բնակիչներին հնարավորություն տալ հավաստիանալու, որ նա իրոք մահացել է⁵: Փաստորեն, Սմբատ Բ-ի դիակը ստիպված հանել են գերեզմանից, քանի որ մարդկանց մեջ տարածվել էր, որ նրան իբր թաղել են կենդանի վիճակում:

Հ. Հարությունյանը համարում է, որ Սմբատ Բ-ի սպանության պատճառն այն էր, որ նա թույլ թագավոր էր և չէր համապատասխանում հայ ավագանու պահանջներին, իսկ վերջինս կարիք ուներ ռազմատենչ գործչի: Նա համոզված է, որ Սմբատ Բ-ի սպանությունը կազմակերպվել էր Գագիկ Բագրատունու և հայ ավագանու կողմից⁶:

Այնուամենայնիվ կարծես մեծ է հավանականությունը, որ Գագիկն իրոք կազմակերպել է եղբոր սպանությունը, սակայն առկա են այն ժխտող իրողություններ: Մասնավորապես, Սմբատ Բ-ի հիշատակը վառ էր պահվում Անիում և արքունիքում, ինչն այդպես չէր լինի, եթե իրոք Սմբատ Բ-ն կյանքից զրկված լիներ Գագիկի կազմակերպած դավադրության հետևանքով: Ի դեպ, նրա որոշ ձեռնարկներ բարձր էին գնահատվում Գագիկ Ա-ի ըն-

¹ **Սամուել Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն Ադամից մինչեւ 1776 թ., Երևան, 2014, էջ 178:

² Տե՛ս **Աստղիկ**, էջ 807:

³ Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, միջին դարեր, գիրք առաջին // **Լեո**, Երկերի ժողովածու, երկրորդ հատոր, Երևան, 1967, էջ 605, **Հարությունյան Հ.**, Հայաստանը IX-XI դարերում, Երևան, 1959, էջ 113:

⁴ **Աստղիկ**, էջ 808:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 808:

⁶ Տե՛ս **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 113:

տանիքում. Անիի Մայր տաճարի հարավային պատին Գագիկ Ա թագավորի կնոջ՝ Կատրանիդե թագուհու անունից փորագրված տեքստում, որը թվագրված է հայոց 450 (1001) թվականով, Սմբատ Բ-ն կոչված է «մեծ». «...գուրք կաթաղիկէս, գոր էր հիմնադրեալ մեծին Սմպատա...»¹:

Հավելենք նաև, որ իրադարձությունների ժամանակակից Աստղիկը, նկարագրելով Սմբատ Բ-ի մահվան հանգամանքները, դավադրության կամ սպանության մասին որևէ ձևով չի ակնարկում, այլ նշում է, որ կնոջ մահը ողբալիս արքան ծանր հիվանդացել է («...հարաւ եւ ինքն բորբոքմամբ տապոյ բոցակեզ ցաւոց...») և վախճանվել հայոց 438 թ. (մարտ, 989 թ.-մարտ, 990 թ.)²: Պատմիչի այս վկայության ֆոնին, ըստ նրա մեկ այլ հիշատակության՝ Գագիկի գործած «միակ չարիքը» Սմբատ Բ-ի սպանությանը վերագրելը խիստ բռնազբոսիկ է, ավելին՝ ուղղակիորեն հակասում է նրա տեղեկություններին: Իսկ թե ո՞րն էր այն «միակ չարիքը», որ գործել էր Գագիկ Ա-ն, առայժմ մնում է գաղտնիք:

Ակնհայտ է, որ թե՛ այն ժամանակ և թե՛ հետագայում Սմբատ Բ-ի սպանությունը Գագիկին վերագրելը, բացի Աստղիկի հիշատակությունից, հիմնված է եղել երկու եղբայրների միջև նախկինում եղած խնդիրների վրա, որոնք, ինչպես վերը համոզվեցինք, հետագայում հարթվել են, և Սմբատ Բ-ն Գագիկին շնորհել է հայոց իշխանաց իշխանի պաշտոնը՝ այդպիսով ճանաչելով նրա գահաժառանգման իրավունքը: Ուստի Սմբատ Ա-ի մահվան հարցում Գագիկին մեղադրելը կարելի է համարել անհիմն:

Արման Եղիազարյան – Հայոց Սմբատ Բ թագավորի և Գագիկ Բագրատունու փոխհարաբերությունները

Ի մի բերելով քննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ 978 թ. սկզբին վախճանված Աշոտ Գ Ողորմած թագավորի երեք որդիների միջև Բագրատունյաց տիրությունների բաժանումից հետո, երբ Գագիկին բաժին էր հասել Գեղամա երկիրը, նա այնտեղ չի հաստատվել, այլ մնացել է արքունիքում, ամենայն հավանականությամբ, արդեն հանդիսանալով հայոց իշխանաց իշխան: Սակայն դավաճանության մեջ կասկածվելով՝ արքտրվել է արքունիքից և որոշ ժամանակ անցկացրել Գեղամա երկրում՝ կատարելով նշանակալից գործեր: Այնուհետև մեզ անհայտ պայմաններում նա վերադարձել է արքունիք և գտնվել եղբոր կողքին՝ մասնակցելով նրա գործունեությանը: Երկու եղբայրների՝ նախկինում ունեցած հակասությունները հայտնի էին արքունիքում, ուստի պատահական չէ, որ երբ մահացավ Սմբատ Բ-ն, լուր տարածվեց, որ նա իբր դավադրության գոհ է դարձել:

¹ «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 35:

² Տե՛ս Աստղիկ, էջ 807:

Арман Егиазарян – Взаимоотношения армянского царя Смбата II и Гагика Багратуни

Ключевые слова – Смбат II, Багратиды, Гагик, владения, раздел, наследник престола, заговор, страна Гегама, царство Таширк

Обобщая результаты исследования, мы можем отметить следующее. После того, как в начале 978 г. трое сыновей умершего царя Армении Ашота III Милостивого разделили владения Багратидов, Гагику досталась страна Гегама. Тем не менее, он не обосновался там, а остался в столице Ани, скорей всего, уже тогда выступая как наследник престола. Однако он был заподозрен в заговоре, изгнан из столицы, после чего поселился в своих владениях в стране Гегама, занимаясь важными делами. Затем, при неизвестных нам обстоятельствах, он вернулся в столицу и находился рядом с братом, принимая участие в его деятельности. В столице знали о противоречиях, имевшихся раньше между двумя братьями, и потому неслучайно, что после смерти Смбата II распространились слухи о том, что он погиб в результате заговора.

Arman Yeghiazaryan – Relationships Between the Armenian King Smbat II and Gagik Bagratuni

Key Words – Smbat II, Bagratids, Gagik, possessions, division, heir to the throne, conspiracy, country of Geghama, kingdom of Tashirk

In the study of the period of the reign of the Armenian king Smbat II (978-990), the problem of the relationship between him and his brother Gagik is of great importance. In this regard, mention should be made of the tragic death of Smbat II, which is sometimes associated with Gagik, who was previously suspected of conspiring against the king. After the death of the king of Armenia Ashot III (953-978), his sons divided the royal possessions into three parts and recognized the supremacy of Smbat II. Each of them received his part of the territory. The youngest of them, Gurgen, passed into his possession and was proclaimed the local king in 978. But Gagik, who also received his part, remained in the capital Ani and since the king had no other heir, he was appointed heir to the throne. Soon he was suspected of conspiracy, left the capital and moved to his possessions in the country of Geghama. After a while, the problem between the brothers was resolved, and Gagik returned to the capital. He received the post of heir to the throne again and after the death of Smbat II on the same day was proclaimed king. But his contemporaries, who knew the problems between the brothers, suspected him of organizing the assassination of Smbat II, and he was forced to unearth the body of Smbat II and show it to everyone.

Արման Եղիազարյան – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (armanyeghiazaryan@ysu.am)

Ներկայացվել է 14.09.2021

Գրախոսվել է 27.09. 2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021